

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆՈՒՆ

Անվանի հայագետ Գ. Խալաթյանի (1858—1912) հրապարակվող նամակներում արտացոլված են «էմինյան ազգագրական ժողովածուի» հրատարակության հետ կապված մի շարք հարցեր: Լինելով այդ ժողովածուի գլխավոր խմբագիրը, Խալաթյանը եռանդուն աշխատանք է ծավալում դրա հրատարակման գործում, հրավիրելով աշխատակցելու նշանավոր գիտնականների (Հր. Աճառյան, Գ. Տեր-Մկրտչյան, Լեո, Կ. Կոստանյանց և ուրիշների): Այդ կապակցությամբ հայտնի բանահավաք և ազգագիր Սարգիս Հայկունուն (1838—1908) հասցեագրված նրա նամակները նոր լույս են սփռում Խալաթյանի գործունեության վրա և արժեքավոր տեղեկություններ են պարունակում հայ ազգագրության պատմության համար:

Նամակները պահվում են Օ. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Գ. Խալաթյանի (V բաժին, ց. 97դ, 97ե, 97զ) և Ս. Հայկունու (դ. 133—136, 138—139) ֆոնդերում:

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

<1900> հունվար 8, <Մոսկվա>

Մեծաբզո պ. Ս. Հայկունի,
բազմաշխատ հայ ազգագիր

Ես մեղավոր եմ Ձեր առաջ՝ 1898 թվի վերջին ինձ գրած մի նամակիդ մինչև այսօր այլ և այլ պատճառներով չպատասխանելուս համար: Բայց այդ երկարատևությունը երբեք չի նշանակում, թե ես այժմ պակաս եմ հետաքրքրվում Ձեր ազգագրական գրվածքներով, քան թե առաջ, բնավ ոչ: Բազմաթիվ և բազմատեսակ զբաղմունքներս մի առ ժամանակ ստիպեցին հետաձգել մեր ազգագրական հրատարակությունը, որ այժմ՝ ի մեծ ուրախություն իմ, նյութական խնդիր է արդեն: Ուստի ներկա գրությամբս գալիս եմ հաստատելու Արժ<անապատիվ> հ. Բագրատ վ. Վարդազարյանցի՝ գրած նամակը Ձեր ազգագրական նյութերը՝ մեզ՝ լազարյան ճեմարան ուղարկելուն, հարկավ, եթե ընդունենք մեր պայմանները: Այդ պայմանները Ձեր կողմից ընդունելուն դյուրացնելու նպատակով ես կարող եմ Ձեր՝ նամակում հիշած Բաճ թվով ազգագրական նյութերից վեցը առայժմ բաց թողնել՝ խնդրելով մեր տրամադրության տակ դնել միայն 14-ը: Բաց թողնելիքն են՝ զրույցներ (անեկդոտ) 7—800 հատ:— Հայ ժող<ովրդական> առակները 50-ի չափ:— Հեքիաթաձև առակներ:— Ժող<ովրդական> բարոյական պատմություններ:— Հերոս Աբրեմի կյանքը:— Տրապիզոնի հայ գլուղի<ացիության> առածանին:

Հարկավ Ձեր ժողոված հիշյալ 14 թվով ազգագր<ական> նյութերը շատ ավելի արժեն, քան այն գումարը, որ առաջարկվում է Ձեզ (մինչև 100 ռ.),

բայց ինչ արած, որ «էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագրությունը առ այժմ կարող է Ձեզ հասցնել միայն այդչափ նպաստ, այն էլ իբրև բացառություն Ձեզ համար, ապագային գուցե հնար լինի ավելի առատորեն վարձատրելու:

Յուրաքանչյուր գրվածքի ժողովածուի մեջ տպագրվելուց հետո ուղարկվի Ձեզ ոչ միայն 150 օրինակ, ինչպես գրել էր Արժ<անապատիվ> հ. Բագրատը, այլ մինչև 300 և ավելի ևս, եթե Դուք այժմ ցանկանաք թղթի և ճանապարհի ծախսը միշտ խմբագրության վրա հաշվելով:

Կխնդրեի այս մասին կարելույն չափ շուտով պատասխանեիք ինձ և Ձեր վերջնական որոշումը գրեիք:

Չմոռանաք խնդրեմ ուղարկել ինձ և Ձեր լուսանկար պատկերը, որով շատ կպարտավորեցնեք:

Մնամ միշտ Ձեզ անկեղծ հարգող՝

Գր. Խալաթյան

Հ. Գ.— Այսու ուղարկում եմ Ձեզ 2 օր. մեր ազգագր<ական> հրատարակության հայտարարությունից²:

Գր. Խ.

2

<1900 փետրվարի 20, Մոսկվա>

Մեծարգո պ. Ս. Հայկունի,
բազմաշխատ հայ ազգագիր

Ձեր նամակը, լուսանկարը, նյութերը և... սովոր ծրարը ապահով կերպով ստացա. նույնպես ստացա հ. Բագրատ վ<արդապետ>ից Ձեր 2 երկը: Այս բոլորի համար շտապում եմ հայտնել Ձեզ խմբագրի խորին շնորհակալիքս:

Ես ինքս էլ լավ գիտեմ, որ այսչափ նյութերի փոխարեն մեր առաջարկած գումարը աննշան է, բայց ի՞նչ արած, խմբագրությունը շատ գումար չունի այժմ: Կա սակայն մի միջոց ևս, որին եթե Դուք համաձայն եք, հնարավոր է գուցե ոչ պակաս, քան դորա եռապատիկը ստանալ: Ահա՛ ինչ է. եթե «Բագրևանդա սովորություններ» երկի մեջ, որը խոստանում եք 2 ամսուց գլուխ բերել և ուղարկել, առանձին և մանրամասն ուշադրություն դարձնեք նույն գավառի իրավաբանական սովորույթների վերա՝ որչափ հնար է, համաձայն իմ հրատարակած Մրագրին (էջ 87—111)¹ և մի ամփոփ աշխատություն պատրաստեք այդ նյութերի մասին, — այն ժամանակ ես հույսով եմ, որ կհաջողի մեզ այդ առաջարկված գումարի ոչ պակաս քան եռապատիկը ապահովեցնել Ձեզ համար այլ աղբյուրից: Ավելի լավ, եթե «Մրագրիս» հիշյալ հարցերի Ձեր տալիք պատասխանները շոշափեն, ոչ միայն Բագրևանդ, այլ և մյուս դրացի գավառների հայ ժողովրդի իրավաբանական կյանքը: Դիտելու է նույնպես, որ հարկ չկա անպատճառ ծայրեծայր պատասխան տալ մի առ մի իմ

թվածս բոլոր հարցերին (1—146), այլ այն միայն, ինչ որ ծանոթ է Ձեզ ժողովրդի կյանքից: Աշխատությունն էլ հարկավ հարց ու պատասխանից չլինի կազմած:

Իմ հատուկ խնդիրս է դեպի Ձեզ և բարեկամական խորհուրդս լուրջ ուշադրություն դարձնել այս առաջարկությանս վերա և անմիջապես տպել աշխատությունը, որ Ձեզ համար միանգամայն մատչելի է և մանավանդ ձեռնտու: Նույն խնդրի մասին արդյունավետ խորհուրդներ և կարևոր բացատրություններ կարող էր տալ Ձեզ Ս. էջմիածնի ճեմարանի երիտասարդ ուսուցիչ և իմ համդիրակ Սիրական Տիգրանյանցը, որին այլ առիթով գրելու եմ մոտերս: Իսկ եթե որևէ պատճառով չցանկանաք ձեռք զարկել իմ ակնարկածս աշխատության, այն ժամանակ իհարկե 'Իուր կստանաք արդեն առաջուց խոստացյալ գումարը, պայմանով, որ խմբագրությանը հանձնեք նաև Ձեր «Բագրևանդա սովորությունները»: Նամակիս հետ կստանաք և մի օրինակ իմ «Մրագիր հայ ազգագրության» և ազգային իրավաբանական սովորությունների» — որոնք վրա առանձնապես հրավիրում եմ Ձեր ուշադրությունը:

Սպասելով Ձեր բարեհաճ պատասխանին,
Մնամ անկեղծ հարգանք և միշտ բարյացակամ

Ձերդ Գր. Խալաթյան

3

1900, սեպտեմբերի 18, Մոսկվա

Մեծարգո Ս. Հայկունի

Այսու գալիս եմ շնորհավորելու Քանանյան մրցանակաբաշխության¹ մեջ Ձեր ունեցած հաջողությունը: Ձեր ներկայացրած «Նյութեր Հայոց իրավաբանական սովորությունների մասին» ձեռագիրը «Լազարյան» ճեմարանի» մասնագիտական դասարանների ուսուցչապետերի խորհուրդը սեպտեմբերի 9-ին կայացած յուր նիստում՝ ըստ իմ զեկուցման, արժանի դատեց վարձատրելու Քանանյան մրցանակով՝ վճռելով հատկացնել Ձեզ գումարի 3/4 մասը՝ այն է 400 ռուբլի:

Ի նկատի ունենալով, որ աշխատությունը յուր բոլոր մասերում կատարյալ չէ, իսկ տեղ-տեղ կարոտ նաև կարգավորելու և լրացնելու... Ուստի ուղարկելով Ձեզ առ այժմ 200 ռուբլի, որ կստանաք օրերս, վերադարձնեմ եմ Ձեր ձեռագիրը կարևոր լրացումներ անելու: Ուսուցչական խորհուրդը պարտավորություն է դնում Ձեզ վրա իրավաբանական նյութերի այլ և այլ մասերում «լրացումներ կատարել» համաձայն իմ դիտողություններին և առաքելիք օրինակներին որպես և Ալաշկերտի մեծ, միջակ և աղքատ ընտանիքների նկարագիրները պատրաստելու, որից հետո պետք է ձեռագրերը մաքուր արտագրել և ճեմարան վերադարձնել: Այնուհետև անմիջապես կուղարկվի Ձեզ մնացյալ 200 ռուբլին. իսկ Ձեր երկը կտպագրվի էմինյան ազգագրական ժողովածուի մեջ:

Հաղորդելով Ձեզ այս վճռի մասին, որին ինքս հարկավ շատ ուրախ եմ, հուսամ որ ամեն կերպ կաշխատեք անհրաժեշտ լրացումները և սրբագրու-

թյունները անելու և կարելույն չափ լիակատար կերպարանք տալու Ձեր աշխատությանը առաջիկա 3—4 ամսվա ընթացքում:

Ցանկալի է Ձեր աշխատությունը արտագրելիս ա) հաբցերը կրկնել և նոցա յուրաքանչյուրի տակը դնել Ձեր պատասխանները: ր) Պատասխանելու է այն հարցերին, որ անպատասխան եք թողել այս գրչագրում: գ) Ավելացնելու է օրինակների թիվը և պայմանների պատճենները, ուր հարկն է: դ) Ընդհանրապես առանձին ուշադրություն դարձնելու է՝ շշփոթելու սովորության իրավունքը՝ այսինքն դարերով ժողովրդի իրեն ավանդությունների հիման վրա սահմանված օրենքը—պետական կամ քաղաքական օրենքի հետ: Ի վերջո, ինչպես առաջ ևս խնդրած եմ, գրելու է միայն մի երեսի վրա և անպատճառ լայն լուսանցք թողնելու է:

Գալով ազգագրական Ձեր նյութերին, ցանկալի էր ուղարկել մեզ ինչ որ ունիք առ ձեռն պատրաստ և ինչ որ հարկավոր եք համարում մաքուր արտագրել: Առանձնապես ցանկալի են մեզ բուն ժողովրդական երգերը և հեքիաթները:

Բոլոր նյութերը կարելի էր հրատարակել էմին<յան> ազգ<ագրական> ժողովածուի մի քանի հատորներում ամբողջապես Ձեր երկերին հատկացնելով նոցա:

Շնորհակալությամբ ստացա Ձեր «Թագուլոր Լուսիկը»², թեև ամբողջապես դեռ կարդացած չեմ, բայց հետաքրքրական է երևում: Հատուկ կիսնորեի Ձեզ հաղորդել ինձ. քանի օրինակ եք տպագրել այդ գրքույկից և ինչ գումար է նստել Ձեզ վերա ամբողջ տպագրությունը՝ թուղթն էլ հաշվելով: Այդ հարկավոր է ինձ գաղափար կազմելու էջմիածնա տպարանի պալմանների մասին. գուցե և ապագայում պետք գա մեզ:

4

1901, հոկտեմբերի 2, <Մոսկվա>

Մեծապատիվ պ. Հայկունի

Սեպտեմբերի 18-ին գրած Ձեր նամակը ստացա և միանգամայն ապշեցի կարդալով (ինչպես Դուք գրում եք)՝ թե «տպված հեքիաթների չափ ևս մոտոս ունիմ, զորս ավելի խնամով գրի առած 'եմ...»: Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ այդ հեքիաթները իր ժամանակին չեք ուղարկել ինձ և ինչու մինչև այժմ ոչինչ չէիք գրում այդ մասին: Ժող<ովրդական> վեսլին և հեքիաթին մի ամբողջ հատոր նվիրելով՝ ես հույս ունեի տեղավորել նորա մեջ բոլոր Ձեզ գրի առած հեքիաթները. իսկ այժմ բանից դուրս է գալիս, որ մի այդչափ էլ դեռ անախ ունիք պահած և որ գլխավորն է, դոքա ավելի խնամքով են գրի առած: Այժմ ես ինչպե՞ս ձեռք դարկեմ Բ. հատորի առակների և այլոց տպագրությանը, երբ մի քանի ժամանակից հետո Դուք դարձյալ կարող եք հաղորդել, թե իմ ձեռքում եղածներիցս զատ՝ ևս ունեի ավելի խնամքով գրի առած ուրիշները և այլն: Այսպիսի ուշացած տեղեկությունները չեն կարող ախորժելի լինել խմբագրության: Ուստի սկսած տպագրությունը շատ շտապեցնելու

[հարկ չկա]: Լավագույն է նախապես ամենայն խնամով նյութերը կարգի բերել, արտագրել և պատրաստել, ապա սկսել նոցա տպագրությունը: Ես այս ասում եմ՝ հավաստի լինելով, թե Դուք ինձանից ոչ պակաս պետք է հետաքրքրվեիք, որպեսզի կարելույն չափ լիամասն և կատարյալ կերպով լույս տեսնեն Ձեր նյութերը: Ուստի այսօր հեռագրեցի Ձեզ՝ ուղարկելու ինձ Ձեր այն ձեռագիր հեքիաթները, որոնք չեն մտել մեր ժողովածուի մեջ և որոնք հետևաբար բոլորովին տարբեր են տպագրվածներից: Նույնպես խնդրեմ հաղորդել ինձ՝ քանի՞ թերթ կարող են բռնել այդ նյութերը:

Այս դեպքում պետք է որ 28-րդ թերթի վերջին 448-րդ երեսը պարապ չմնա, իսկ հավելվածը տեղավորվի բոլոր հեքիաթներից հետո: Եթե ունիք Դավթի պորտից (?) — «Դավիթ և Մելիք»¹, «Սաֆար փաշեն», «Բալաբ աշառ»², — ուղարկեցեք, խնդրեմ, աչքի անցնելու:

Սրբագրությունը, որը ամբողջապես Ձեր ձեռքն է, կարելույն չափ կաշխատենք, որ որոշ չափով վարձատրված լինի: Իբրև նմուշ վաղը կուղարկեմ Ձեզ առաջին հատորի շապիկը, որը օրինակ պետք է լինի և բոլոր հաջորդ հատորների համար:

5

1901, հոկտեմբերի 28, <Մոսկվա>

Անցյալ օրը ես հեռագրեցի Ձեզ, թե տպագրված 28 թերթը կբռնեն Ձեր երկերի առաջին հատորը, շարունակությունը հեքիաթների (որ ուղարկված են ինձ) երկրորդ հատորը շարված, մամուլները ցրվելու է, իսկ քրդական վեպերը — երրորդ հատորը:

1. Արդ՝ առաջին հատորը պատրաստ է ուրեմն. ես կազմում եմ Հառաջաբանը և ցանկը, շուտով կտպագրվի և ես կուղարկեմ տպարանական ժողովին՝ գունավոր շապիկի հետ միասին — կցելու տպագրված 28 թերթին: Դրքի գինը դժվար է 1 ռուբլուց ավելի նշանակել, համենայն դեպս <...> ոչ ավելի: Տպագրված № 29 թերթը (Քրդական վեպ հավելված) թող մնա առայժմ, մնացյալ 3 շարված մամուլները ցրվելու է՝ հարկավ, թե՛ 29-րդ և թե՛ այս վերջին երեք մամուլը մեր ժողովածուի մեջ մտցնելու պայմանով:

2. Ձեր ուղարկած ծրարը ստացա և աչքի անցրի: Հեքիաթները՝ բոլորն էլ հետաքրքրական են և արժանի տպագրության, ուստի, Ձեր մոտ գտնված բոլոր հեֆիաթները՝ աշխատեցեք կարգի բերել, ստուգել և արտագրել, և ինձ ուղարկել, որպեսզի երկրորդ հատորն ամբողջապես նվիրենք հեքիաթներին՝ և դորանով վերջ տանք ժողով<րդական> գրականությանը այդ տեսակ նյութերից: Սակայն Ձեր ուղարկածների միջից 15 հատը ես հանեցի, հատկացնելով դոցա առականների բաժնին, որոնց և կմիացվեն նոքա:

3. Քրդական վեպը շատ ավելի կարևորություն ունի, քան թե կարելի էր կարծել. այս եզրակացությանը եկա ես՝ կարդալով Ձեր վերջին ուղարկածները, որոնց մասին Դուք մինչև այժմ ոչինչ չէիք հիշում:

Հավատացած եմ, որ սոցանով էլ չէ սպառվում քրդական վեպը — անշուշտ դեռ շատ նյութեր կան, դուցե նաև Ձեր սեպագրությունների և նկատո-

ղությունների մեջ: Ուստի իմ հատուկ խնդիրս է՝ ամեն կերպ հոգ տանել այս նյութի վրա և հավաքել՝ ինչ որ կարելի է. առանձնապես ցանկալի է՝ վեպերի երգերը և այլ մասերը ֆրդական լեզվով հաղորդել— հարկավ՝ ինչ որ հնար է:

Կրկնում եմ, որ Ձեր այս աշխատությունը առանձին ուշադրության կարժանանա բոլոր եվրոպացի իրանագետների (պարսկագետների), հատկապես Ֆիրդուսիի «Շահ-Նամե» վեպի ուսումնասիրողների առաջ: Մանավանդ եթե ևս գտնվեն Պեճանի, Սիափուշի, Ռոստոմ Զալի նման վարիանտները— օրինակ՝ Զոհրապի, Աֆրասյայի, Մարաջանի, Գուրգենի կամ Գուբջենի, Քեյ-քաուսի մասին: Իսթենդիարի: Այս է պատճառը, որ Ձեր վերջին նյութերը ստանալուց հետո վճռեցի քրդական վեպը ամփոփել առանձին հատորում, թող որ այդ հատորը շատ էլ սովոր չլինի:

6

<1901> նոյեմբերի 1, <Մոսկվա>

Մեծաբզո պ. Ա. Հալիուհի,

Ձեր վերջին նամակը, որպես և 14 մամուլ հայ-քրդական վեպերից՝ ստացա: Վատ չէ տպագրությունը, բայց թուղթը դարձյալ թանկ կնստի մեզ, թեև առաջվանից աժան պետք է հաշվվի՝ ինչպես գրել էիք Դուք Ձեր նախընթաց նամակում:

Այսու ուղարկում եմ Ձեզ 17 կտոր քրդական էջերի խաղերից, որ արժ<անապատիվ> հ. Կոմիտասն էր գրել, համաձայն Ձեր գրության և որոնք մտնելու են տպագրվող հատորի մեջ: Թող, ինչպես ասում եք, նորեն աչքի անցընեն և եթե ձեռնառու լինի պայմանը, կարող եք այդտեղ տպագրել: Ուստի նեղություն կրեցեք նախապես հաղորդել ինձ, ի՞նչ կարժենա խաղերի տպագրությունը (երգերը պետք է անընդհատ մեկը մյուսի հետևից տպագրել): Այդ խաղերի վարձատրությունը դեռ գարունը ուղարկված է հ. Կոմիտասին, չգիտեմ ստացական ուղարկել է, թե ոչ:

Խաղերից զատ ուղարկում եմ Ձեզ իմ մոտ գտնված Ձեր երգերից՝ 1. Հարսանիք՝ Թորոն և Վարդոն, 2. Խաղեր (36), 3. Մի քանի կտոր բան, որ իմ կարծիքով, չարժե տպագրել, 4. Թագավոր Լուսիկ, 5. հավատք, 6. Ժողովրդական կենցաղավարություն, 7. Գութան, և 8. Բառարան:

Այս ձեռագրերի ստացման մասին՝ խնդրեմ նոցա ստանալուն պես, հաղորդեք ինձ նամակով, թե ինչ է մնում այլևս ինձ մոտ, իսկ ինձ մնաց միայն «նյութեր սովորության իրավունքի», որ պետք է հանձնվի ձեռնհաս իրավաբանի՝ աչքի անցնելու և ապա կտպագրվի:

Գալով հաջորդ՝ չորրորդ, հինգերորդ Ձեր հատորների տպագրությանը, չգիտեմ, պատրաստի գումար կունենա՞ք արդյոք: Համենայն դեպս Դուք պետք է նախապես կարգի բերեք թե՛ առակ, առասպել, զրույց և այլն և թե՛ առած, հանելուկ, աղոթք, անեծք և այլն և թե՛ մանավանդ ժող<ովրդական> Իրգեւր, որպէս և «կենցաղ և զբաղմունք (գութան), ընտանեկան բարք, սովորույթ ու հավատք»: Կարգի բերելուց հետո կկամիք ձեռագրերը ուղարկել մեզ մի անգամ ևս աչքի անցընելու, ապա թե կարող եմ վճռական պատասխան տալ Ձեռ:

Մի խնդրի վրա դարձյալ հրավիրում եմ Ձեր ուշադրությունը. պետք է կարելու չափ աշխատել, որ տպագրությունը աժան նստի, որովհետև փողը սակավ է։ Ուստի նորից հարց պիտի ծագի թղթի մասին. թուղթը 5—6 ռուբլուց ավելի ոչ մի կերպ չի կարող լինել։ Նույնպես խնայողություն անելու է այլ ծախքերի վերաբերմամբ։

Սրբագրության համար Ձեզ նշանակած գումարները ըստ երևույթին պետք է լինեն տպարանի ընդհանուր հաշիվների մեջ, այսինքն՝ տպարանին յուրակված գումարների մեջ, ուստի հատուկ կխնդրեի զգուշությամբ տեղեկանայիք և ստուգեիք և հետևանքը ինձ հազորդել հաճեիք։

Անկեղծ հարգանքով՝

Ջերդ

7

1902, հուլիսի 12, <Մոսկվա>

Նրկու ծրարն էլ ստացա երեք օր առաջ։ Թերթելով քրդական վեպը՝ եկա այն եզրակացության, որ հայ վեպերից ու հեքիաթներից հետո՝ սկսելու է քրդականը տպագրել։ Նյութերն՝ ըստ երևույթին բոլորն էլ պատրաստ են։ Երաժշտական խաղերը եթե հաջողցնեք, կարելի է գրքի կամ սկզբում դնել, կամ վերջը կցել։ Պետք է, սակայն, որ բուն խաղերը պատրաստել տաք և ուղարկեք մեզ։ Մի չափավոր գումար, ինչպես առաջ էլ գրած եմ, կհատկացնեք դորան։

Առաջիկա՝ Քրդական վեպի հատորի առթիվ հարկ եմ համարում դիտողություններ անել։

1. «Ճանպարհ» վեպը պետք է ուղղել և մաքուր արտագրել։
2. «Ղանդեղի Սիյափուշ» երգերը թարգմանել հայերեն։
3. Եթե ֆրդական երգերը միևնույն բարբառով չեն, կարելի չէ՞ր հիշել, թե այս կամ այն երգը հատկապես ո՞ր ֆրդական բարբառով է։
4. Հայերեն բնագրի օտար բառերը (ոչ երգերի մեջ) կամ ամեն դեպքում փակագծի մեջ և կամ տողի տակը նույն երեսում նշանակելու է։
5. Աշխատելու է կարելու չափ ճիշտ և խնամքով թարգմանել քրդական երգերը, նույնպես ուշի ուշով միտ դնել բառերի տառադարձության կամ փոխադրության՝ պ, բ, փ, տ, դ, թ, կ, դ, ք տառերի։ Մի քանի օրինակ՝ «Ճանպարհ» վեպում հիշվածներից «Առեք», — (բանի) թե՞ Բոք, — «Լապի» թե՞ Լաբի, — «մկու» (ես ասացի) թե՞ մգու, — «Արսա» (հարցուց) թե՞ Ֆրսա, — «Ատեա» թե՞ Բդեա, — «Կետո» (ուլ) թե՞ Բետո, — «Կըր» (էրավ) թե՞ Բըր, — «Ալար» (տակ) թե՞ Բար, — «Աեր» (առաջ) թե՞ Բեր, — «Նապը» (չլինե) թե՞ Նաբը, — «Կիաստան» թե՞ Գիասդան և այլն։
6. Վեպերը տպելու է այն կարգով, ինչպես նշանակել եմ ես կարմիր մատիտով։ Ռուստեմ, Ջալ, Բեճան, Սամ, Սիափուշ — պարսից հնագույն վիպասանության գոհարներն են։ Ափսոս որ Ջոհրաբի կամ Ջուրաբի (Ռուստամի) վեպը չունենք գրի առած, շատ ցանկալի էր այն ևս ունենալ։

7. Առականները վերադարձնում են Ձեզ՝ առանց շտապելու կարգի բերելու նոցա, ապագա հատորի համար: Առակ, առասպել ու զրույցն այնքան իրար նման են, որ դժվար է որոշակի մեկը մյուսից զատել: Ուստի առաջին բաժնում կտեղավորվեն այդ երեք տեսակները միասին, երկրորդում կենդանական վեպերը, որ նույնն է, ինչ որ առակը, միայն գործող անձինք կենդանիներն են:

Գ — առականեր, Դ — առածներ, Ե — հանելուկներ: Գալով առականների դասավորությանը և բարբառների խնդրին, միանգամայն ընդունում են Ձեր առաջարկությունը, այն է՝ նման առականները իրար մոտ դնել տարբեր բարբառներով, ուրեմն բարբառները իրարուց կտարբերվեն, բայց նման առականները կմիանան:

Երբ որ կարգի բերելու, արտագրելու լինեք առածները, ինքներդ շատ բան ինչ որ անհամ և անհոտ է, բաց կթողնեք անշուշտ: Սաստիկ զբաղված լինելով, այժմ իմ մի ընդարձակ երկս տպագրության պատրաստելով, ցավում են, որ այժմ աչքե անցլնել կարող չեմ: Այդ վերաբնությունը ես կկատարեմ, երբ որ հաջողությամբ Դուք կպատրաստեք տպագրության Ձեր երկերի երրորդ հատորը և մաքուր արտագրելով ինձ կուղարկեք:

8

<1902,> հունիս 24, <Մոսկվա>

Ձեր ուղարկած հեքիաթները վերադարձնելուց հետո՝ ստացա Ձեզանից մի հեռագիր և անցյալ օրը «Դավիթ և Մհերի» վեպը Արարատյան բարբառով, որին ծանոթանալուց հետո հեռագրեցի Ձեզ, որ այս հատորը վերջացնեք շարվող «Դավիթ ու Մհերի» վեպով ևս և այժմ իմ ձեռքս գտնված, և այսօր իսկ Ձեզ ուղարկված «Դավիթ ու Մհերով» (Արարատյան բարբառով) վերջին հեքիաթները <ևս> վերադարձրի Ձեզ, մնացյալները կտեղավորեք այս հատորի մեջ:

Կարծեմ, հասկանալի է, հեքիաթների մասին վճիռս փոխելուն (չէ՞ որ գրել էի՝ տպագրել նոցանից երկուսը), նախ այս «Դավիթը» ավելի ընդարձակ է, քան ես ենթադրում էի և երկրորդ՝ մյուս «Դավիթից» արդեն կեսը շարված է: Ուստի լավագույն է տպված հեքիաթներով բավականանաք և հատորը վերջացնեք հավելվածով, ուր կմտնեն երկու «Դավիթ» վեպերը:

Գրքի կազմը էջմիածին շտապելուն կան մի քանի պատճառներ: Նախ՝ հպիվ թե այդտեղ նույնպիսի ուսերեն և ֆրանս<երեն> տառեր գտնվեն, նույնպիսի ընտիր թուղթ: Բացի դորանից, հարկ կլինի ուղարկել և էմինի պատկերի կիշեն ևս: Խմբագրության կանոնն է, որ բոլոր յուր հրատարակությունները արտաբուստ միակերպ լինեն: Այս հատորը, կարծեմ, հարմար կլինի խորագրել «Հայ ժողովրդական հեքիաթներ», հավաքեց Ս. Հայկունին: Եթե կարող կազմի տարբերությունը արդարև մի կուպեկ է, ապսպրեք կարով:

9

1905, հունվարի 12, Մոսկվա

Մեծապատիվ պ. Ս. Հայկունի.

Ցավում են, որ միայն հունվարի սկզբին վերադառնալով Պետերբուրգից, ամսու չափ բացակայությունից հետո, ստացա Ձեր նամակը: Ուրախ են, որ

կազդուրվել եք երկարատև հիվանդությունից, ուստի բնականաբար նորից կսկսեք Ձեր մշտական և սիրելի ղրաղմունքը, ազգադրական նյութեր ժողովելու և ժողովածը կարգի բերելու:

Ա. Տոների պատճառով միայն այս օրերս հնար եղավ հոգալ Ձեր մասին — գեթ վերջին դրքի՝ սրբագրության համար 40 ռուբլի վճարելու, որը կստանաք շուտով: Անցյալի մասին դժվար է որևէ բան անել, որովհետև ճեմարանի վարչությունն անշուշտ փողն ուղարկել է, իսկ դուք, ինչպես ասում եք, չեք ստացել: Վերջին 3—4 տարին քանի՞ անձինք են փոխվել տպարանի վարչության մեջ, ինչ անենք:

Բ. Ձեր շնորհալի օր. Արուսյակի ուղարկած ծրարը ժամանակին ստացել եմ անկորուստ, միայն այս օրերս միջոց գտա աչքե անցընելու նյութերը: Ընդհանրապես լավ բաներ կան մեջը, բայց ոչ բոլոր բաժինները հավասարապես գոհացուցիչ են: Օրինակ՝ երգերի մեջ շատ պակասավոր են հարսանյաց, օրոքոցի, սիրահարական, վիճակի, սգի ու լացի, նաև գութանի և սայլի:

Ավելի բավարար են առածները, մասամբ էլ՝ հանելուկները: Դարձյալ ցանկալի լրություն չունի անեծքի, օրհներգի և երդման բաժինը:

Մի բանի հատ աշուղական երգերը, որ կցել եք վերջում, բնավ բաց թողնելու է, իբրև բուն ժողովրդականից բոլորովին տարբեր բաժին: Ես հիշել եմ, որ Դուք երգերից ավելի նյութեր պետք է ունենաք, քան ես տեսնում եմ այժմ:

Բայց այս նյութերը եթե տպագրվելու լինեն, շատ էլ ստվար հատոր չեն կազմիլ, այլ մի բարակ տետր: Ուստի վերադարձնելով Ձեզ Ձեր ձեռագիրը, խնդրեմ զգալի կերպով լրացրեք, ուղղեք և վերստին կարգի բերեք, ապա թե ուղարկեցեք նորից ինձ:

Եթե լիովին գոհացուցիչ լինեն նյութերը և համապատասխան մեր ծրագրին, կաշխատենք տպագրել էմինյան ազգական < ժողովածուի հաջորդ հատորներից մեկում: Ինչ-ինչ խմբագրական ծանոթություններ կգտնեք բուն Ձեր ձեռագրի մեջ՝ լուսանցքներում:

Անկեղծ հարգանքով՝

Պերդ Գր. Խալաթյան

10

1905, հուլիս 31, Մոսկվա

Մեծապատիվ Ա. Հայկունի.

բազմաշխատ բանահավաք

Ձեր ծրարը և նամակները ստացա:

1. Զ հատորը կարող ենք Ձեր երգերին նվիրել և սկսել տպագրել մի պամանով, որ Ձեր հավաքածուին կցվի իբրև Հավելված, վաղուց իմ հանձնարարություններս գրի առած «Խլաթցոց հարսանիք» վերնագրով մի աշխատություն, որ զուրկ չէ հետաքրքրությունից և մի տեսակ լրացուցիչ մասն կկազմե Ձեր Հարսանյաց երգերին: Կսպասեմ այս մասին Ձեր համաձայնություն:

2. Այս հավելվածից զատ ուրիշ բան չէ կարող մտնել Զ հատորի մեջ։ Ուստի այլ և այլ հերթաթիւներ և կենդանական, բուսական և այլ առակներ, որոնք կապ չունին Զ հատորի բովանդակութեան հետ, պետք է դուրս մնան այս հատորից։

3. Տպագրութեան մասին ևս կգրեմ ինչ որ հարկն է տպարանի վարչութեանը։ Բայց չեմ կարող համաձայնել Ձեզ հետ, որ Երզնէրը շեղատառով շարվին։ Այդ տառերից էլ ավելի անհարմար և դժվար ընթեռնելի ևս չդիտեմ։ Ուստի բնագիրը պետք է շարվի Ձեր նախկին հատորների նման։ Վնաս չկա, եթե մի քանի տառեր մաշված լինին։ Տպարանի վարչութեանը կխնդրեմ, ուշադրութեամբ դարձնել այդ կետի վրա։ Գրաշարի մասին էլ կգրեմ և կխնդրեմ որքան հնար է դուրսբերուններ ընծայել Ձեզ։

4. Թուղթը օգման 6 ռուբլուց ոչ մի կերպ ավելի չէ կարող լինել։ Ցանկալի էր նաև այդ գնից պակաս 5 ռ. 50—5 ռ. 75 կ., ինչ արած, միջոցներս չեն ներում։ Շարվածքը կարող եք սկսել Ձեր համաձայնութեամբ ինձ ուղարկելուց և երդերի սկզբի մասը (մանավանդ կրօնական) կարգի բերելուց հետո։

5. Նյութը համարյա բոլորը ոտանավորի ձևով լինելով՝ պետք է մեծ ուշադրութեամբ դարձնել զանազան բաժանումների արտաբերի վերա խորագրերի և զխորագրերի վերա։ Շատ բան Ձեր նյութերի մեջ դեռ անպատրաստ է և խառն, պետք է կարգի բերվեն դոքա մեծ զգուշությամբ։ Հավատում եմ, որ, ինչպես դուրս եք ինձ, տպագրութեան միջոցին ամեն ինչ ևս կտանիք, որ վաշկուշ և օրինավոր դուրս գա այս ժողովածուն։

6. Ձեր նյութերի սկզբում կրօնական երգերի շարքում զետեղված են մի քանիսր, որոնք ըստ բովանդակութեան կրօնական լինելով հանդերձ, պատկանում են ավելի «Երգեր, անեծք, երգում» բաժնին. այդպիսիները ես նշանակել եմ Գ տառով, որովհետև դոքա նյութերի շարքում Երդուր (Գ-րդ) բաժնին են կազմում։

Ուստի տեղափոխեք դոքա Գ. բաժինը կամ զլուխը։ Ցանկալի էր մանավանդ լրացնել Բում կրօնական երգերի մասը՝ ավելացնելով «Կարոս խաղի» նման երգեր կամ զովասանքներ վերաբերյալ Աստվածածնա, ս. Կարապետին, ս. Սարգսին, ս. Վարդանին (Ժանոթ է Ձեզ այս երգը՝ «Ս. Վարդան խեծավ զուր չորին...»), ս. Գևորգին և այլն։ Բայց խիստ զգուշանալու է, որ դոքա աշուտական չլինեն, աշուղականը մեզ պետք չէ։

7. Զ հատորը կբովանդակե ուրեմն. ժողովրդական բանավոր դրականութեան տեսակները։

Ա— երգեր (8 բաժին)։ Բ— առած, ասած <ված>։ Գ— աղոթք, անեծք, երգում, օրհնանք։ Դ— հանելուկ, ծածկաբանություն, շուտասելուկ։ Հավելված— «Խլաթցոց հարսանիքը»։ «Խլաթցոց հարսանիքի» պատմողի մասին կուղարկեմ Ձեզ մի համառոտ ծանոթութեան՝ բնագրի տակը տեղափոխելու համար։ Դնում եմ այստեղ Զ հատորի հատակագիծը՝ Ձեր գլուխութեան համար (առանձին թերթերի վրա)։

Առանձնապես խնդրում եմ ուշադիր լինել, Երբ կտպագրվի «Խլաթցոց հարսանիքը»։

1. Գրի առնողները մի տեսակ սովորութեամբ (զուցե հետեւելով «Հյուսիս-ստափայլին») բոլոր էական բայերը կից են գրում բայարմատին և այլ անուն-

ներին. այսպես՝ աղջիկնա, մարթա, ինչնա, մեռերա, հօրին՞մ, գացիրինք պետք է էական բայերը բաժանել, աղջիկ ևա (է) մարթ ա, ինչ նա, մերեր ա, հօրի՞ նմ և այլն: Արդարև այդ բաժանումները ես արել եմ: Բայց զուցե աչքաթող արած լինեմ մի բանիսը:

2. Ինչպես արդեն ընդունել եք Ձեր բոլոր հատորներում՝ օտաբ բառերը նոսր շարել, նույնպես վարվելու ենք և այստեղ, ուստի խնդրում եմ զգուշությամբ կատարեք սրբազրույթունը և եթե գտնվեն օտար, այլազգի բառեր առանց ստորագծի (որ է նոսր) խնդրեմ ստորագծեք:

Ապասելով Ձեր նամակին՝

Մնամ անկեղծ հարգանքով՝

Ձերդ Իր. Խալաթյան

Հ. Գ. Հարկավ՝ Զ հատորիցն էլ, ինչպես նախկին հատորներից, կստանաք 200 օրինակ և սրբազրույթյան ու փոստի համար նույն չափով:

Այսու ուղարկում եմ Ձեր խնդրած «էմինյան ազ<զագրական> ժող<ովածուի> Ա հատորը:

Նույն.

Մեծարգո պ. Ա. Հայկունի,

Այսօր, վաղը և մյուս օրը կուղարկվեն Ձեր անվանը Հազ<արյան> ճեմարանի կողմից զատ-զատ ծրարներ՝ յուրաքանչյուրը 12 ֆունտ, դոցա մեջ կգտնեք 2 հատորի շապիկը և Հառաջաբանը (28 երես) — 450 օրինակ և Ձեր լուսատիպ պատկերը — 500 օրինակ, որը խմբազրույթյունս որոշեց զետեղել 2 հատորի սկզբում (ոուսերեն Հառաջաբանից առաջ՝ երեսը դեպի Հառաջաբանը դարձրած): Այդ 500 օրինակից 450-ը կհատկացնեք զրքի համար և մնացյալ 50 օրինակ կպահեք Ձեր տրամադրության տակ:

Խերթերը ստանալիս՝ խնդրեմ ուշադրություն դարձրեք Հառաջաբանի վերա, որ տպված է երեք առանձին թերթերի վերա — առաջինը՝ որ սկիզբն է, ունի 16 երես (I—XVI) և ամբողջ է. մնացյալ երկուսը (էջ XVIII—XXIV և XXV—XXVI հաջերեն խորագիրը) պետք է կես-կես անել, չլինի թե կազմարարը շփոթե՛ւ: Չմոռանաք կտրել տալ հին խորագիրը՝ էջ 1—2 (ժողովրդական բան<ավոր> գրականության տեսակներ), որը ավելի հարմարավոր ձևով զետեղված է իմ Հառաջաբանիս վերջը: Դարձյալ չմոռանաք վերիպակները (իմ և Ձեր դիտածները) — կամ վերջին թերթի վերջին պարապ երեսում (էջ 416) և կամ մի կտոր թերթի վերա տպագրել տալ և կցել զրքին:

Վերիպակները կարող եք խորագրել այսպես.

Կարևորագույն վերիպակներ

տպւած է. կարդա.

Արդեն գրած եմ Ձեզ և 269—272 երեսների մասին, որոնք կարծեմ կրկին անդամ են տպագրւած:

Ուրեմն՝ 450 օրինակներից 250-ը կստանաք Դուք, մնացյալ 200-ը անմիջապէս կտնօրինեք անհապաղ Մոսկւա ուղարկել լազարյան ճեմարան (Магистратуры скорости). այս մասին կգրեմ և տպարանի վարչության: Գիրքը ընդհանրապէս լավ տեսք կունենա, պետք է միայն ծալքերը կտրել տալ:

Ձեր սրբագրական, արտադրական և այլ աշխատութիւնների համար հատկացւած է 100 ռուբլի, որ կստանաք ինքներդ անձամբ՝ գրքերը Մոսկւա ժամանելուն պես:

Ձեր կենսագրութիւնը (տետրը) առայժմ ինձ մոտ է մնում: Իմ ծանոթներիցս մեկը՝ Արշակ Կարապետյան, հետաքրքրւեց ղրանով և սկսեց մի հոդւած գրել (որ գուցե «Ազգագրական հանդեսում» կամ այլ տեղ լույս կտեսնի), բայց մի քանի կետերի մասին անհրաժեշտ տեղեկութիւններ պակասում են, որոնց առիթով նա ինքը կդիմե Ձեզ նամակով: Համառոտ կենսագրութիւնից (ինչ ինչ և ընդարձակեց) ես օգտւեցի, ինչպես կտեսնեք իմ Հառաջաբանում:

Գալով հաջորդ էմի<նյան> ազգ<ագրական> ժող<ովածուի> հատուրի հրատարակութիւնը, պետք է հայտնեմ Ձեզ, որ Ձեր երկերից ես հարմար եմ տեսնում այն բաժինը, որը մինչև այսօր դեռ շոշափած չէ և որը մի տեսակ կամբողջացնե Ձեր մինչև այսօր լույս տեսած աշխատութիւնները, թող որ դոցանցից մեծագույն մասը գրական լեզվով է գրւած, ինչպես որ այդ պահանջում է նյութը, այն է՝ Հավատք և սնոտիապաշտութիւն, ժողովրդ<ական> կենցաղ և զբաղմունք: Ուստի եթե կամիք տեղափոխել Ձեր անտիպ մնացած նյութերի մի մասը էմ<ինյան> ազգ<ագրական> ժող<ովածուի> առաջիկա հատորում՝ խնդրեմ առանց ժամանակ կորցնելու կարգի բերեք (համաձայն իմ «Ծրագիր հայ ազգագրութիւն»-ը), լրացնեք և ուղարկեք ինձ: 1. «Հավատք և նախապաշարմունք» (թեև գրական՝ բայց օրինակաները, ասացւածները և այլն դավառական բարբառներով կլինեն անշուշտ): 2. «Կենցաղ և զբաղմունք Տրապիզոնի հայ գյուղացոց», որի վերջնական խմբագրութիւնը կազմելիս ցանկալի էր ի նկատ առնելք 1887 թվին (հունիս-հուլիս կարծեմ) «Արձագանքում» լույս տեսած Գար. Ենգիբարյանի՝ «հողային համայնքի» ծրագիրը, ղեթ համառոտ կերպով օգտւելով սրանից: 3. Ձեր «Գութանը» և 4. «Ընտանեկան բարք և սովորութիւն» (ո՞ր գավառի), որ թերի է և որը պետք է լրացնել: Ուրեմն 4 նյութերից՝ 3-ը գրական լեզվով են, որից կարող եք եզրակացնել, որ ես սկզբունքով հակառակ չեմ գրական լեզվին, ուր այդ պատշաճավոր է ազգագրական այս կամ այն բաժնին:

Ձեր ուղարկած նյութերը ես աչքե կանցրնեմ և իմ վերջնական կարծիքս կհաղորդեմ Ձեզ: Կամի՞ք՝ ուղարկեցեք և Բաղարամը՝ անշուշտ լրացրած բոլոր այն դավառական բառերով որ, դործ են ածւած Ձեր 4 հատորներում: Հարկավ, տա՛նկերեն և այլ օտար բառերն էլ պետք է մտնեն բառարանի մեջ:

Եթե Ձեզ չհաջողի Աճառյանին տեսնելու կամ նրա խորհուրդներով օգտւե-

լու, որ շատ ցանկալի էր, դիմեցեք այդտեղ Բառարանի համար պ. Գալուստին, Հով. Հովհաննիսյանին, Ստ. Կանայանին և այլոց...

Անկեղծ հարգանքներով և ջերմ բարեմաղթություներով

Մնամ Ձերդ՝ Գր. Խալաթյան

12

1906, հուլիսի 17, Մոսկվա

Մեծարգո պ. Ս. Հայկունի,

Ձեր՝ հուլիսի 3-ին գրած նամակը ստացա։ Շտապում եմ տեղեկացնել Ձեզ, որ Դուք այնպես չեք հասկացել իմ դիտավորությունս Ձեր գավառական բառերի բառարանի կազմության մասին։

Նախ՝ բնավ հարկ չկա հիշել՝ թե ա՛յս կամ ա՛յն բառը ո՞ր մեկ հատորի ո՞ր էջի և ֆանիերոդ տողի մեջ է պատահում, ինչպես Դուք եք գրում։

Երկրորդ՝ այդ Բառարանը պետք է մտնեն ընդհանրապես բոլոր Ձեր հավաքած գավառական բառերը, միևնույնն է, հիշվում են նոքա Ձեռ շորս հատորներում, թե ոչ։

Եվ երրորդ՝ օտար բառերը (արաբ, թուրք, պարսից) իմ կարծիքովս, կարելի էր գատել հայ գավառականներից, իբրև հավելված, ուր կմտնեին հարկավ միայն այն բառերը, որոնք արդարև՝ պատահում են Ձեր շորս հատորներում՝ առանց տեղնիտեղը հիշելու, թե ո՞ր հատորում և ո՞ր էջում ու տողում են նրանք պատահում։

Վերջապես՝ եթե Դուք խոստովանում եք, որ այդ «ծանր գործ է» և դժվարություններ ունի Ձեզ համար, կարող եք առայժմ թողնել Բառարանի (այդ ձևով) հրատարակությունը, զբաղվեցե՛ք մյուս Ձեր գրվածքները կարգի բերելով և տպագրության պատրաստելով։ Արդարև, Բառարանի կազմությունը մասնագիտական պահանջներ ունի և իզուր չէր, որ ես վերջին նամակումս պնդում էի անպատճառ Հ. Աճառյանի հետ բանակցել և նորա խորհուրդներից օգտվել, գուցե նաև նորա անմիջական մասնակցությամբ հրատարակել Բառարանը։ Պետք է միտ դնել այն հանգամանքի վրա, որ ա՛յլ է առանձին գրելով հայ գավառականի բառերի բառարան հրատարակել, ա՛յլ է նույն բառերի համար օտար բառարանը իբրև հավելված հրատարակելը. առաջին դեպքում բառարանը պետք է լինի զուտ մասնագիտական՝ համապատասխան գիտնական պահանջներին, երկրորդում՝ դա մի գործնական աշխատություն է՝ դյուրացուցիչ միջոց ընթերցողներին՝ ըմբռնելու իրենց կարդացածը։ Ես առաջ մտադիր էի առաջին ձևով հրատարակել. — այժմ հակամետ եմ երկրորդ ձևին, այսինքն՝ Ձեր բոլոր հավաքած դավառ<ական> բառերը՝ իբրև բառատեստր կցել առաջիկա Ձեր 5-րդ հատորին — Հավելվածի նման, այս դեպքում օտար (արաբ, թուրք, պարս.) բառերն էլ կարող էին հայ բառերի հետ տեղավորել, միայն թե պետք է որոշվեն փակագծի մեջ (ա. = արաբ., թ. = թուրք և պ. = պարսից), ուստի անհրաժեշտ է օտար բառերն առանձին արտագրել իրենց նշանակությամբ և ինձ ուղարկել։ Ես կարող էի այդ որոշումները փակագծի մեջ դնել այստեղ և Ձեզ ուղարկել։

Մտածեցե՛ք, տեսե՛ք ինչ որ գրում եմ և հետո պատասխան տվե՛ք ինձ։
Գրքերը դեռ մինչև այժմ չստացվեցին, հուսով եմ շուտով կստանանք։

Անկեղծ հարգանքով՝

Ջերդ՝ Գր. Խալաթյան

Հ. Գ.— Շատ կարևոր է, որ բառարանում ավելորդաբանություն չլինի, բացատրությունները պետք է լինեն կարճ և որոշ։ Մեծ կարևորություն է տալու, որ համառոտությամբ նշանակված լինի բառարանում փակագծի մեջ՝ թե ո՞ր դավառի բառ է այս կամ այն խոսքը (վն—Վան, մշ—մշեցոց, տր=Տրապիզոն)։ Նույնպես առանձին ուշադրություն է դարձվելու բառերի ուղղագրության միօրինակության վրա (օր. կլօխ, կլոխ, դլօխ.— անկաճ, անկանջ,...)։

Մեծարգո պ. Ս. Հայկունի

Ձեր ուղարկած 5 օր<ինակ> «Կենդանական վեպեր»¹ գրքույկը ստացա՝ այսօր շնորհակալությամբ։ Գրքույկը լավ տպավորություն է գործում, մանավանդ հիանալի են Աղվեսավեպերը։ Բայց ինչ հարկ կար 4 մասի վերածել նյութը և եթե առաջին մասը պատանկական է, միթե մյուս մասերը պատանկական չե՞ն. արդեն կենդանական վեպ ասելով՝ հասկացվում է բոլորը։ Կարելի էր գուցե միայն Աղվեսավեպերը դատել։ Վերնագիրն էլ, առաջաբանն էլ կարելի է փոքր-ինչ ավելի աջող կադմել։ Բայց եղածն էլ վնաս չունի։ Ափսո՞ս որ տպագրությունը մի քիչ անխնամ է կատարված։ Բավական տառասխալներ կան։ Բառարանը լավ է, եթե միայն պակասավոր չլինի։

Գալով կենդանական վեպերից մի քանիսը գրական բարբառի վերածելուն՝ մանուկների ընթերցանության համար այդ լավ միտք է, բայց դրա համար պետք է նախ լավ ընտրություն անել վեպերից, և երկրորդ— մատչելի և սիրուն լեզվով՝ հարմարեցնել նրանց, որ այնքան էլ հեշտ բան չէ։ Այդպիսի մի գործ կարող էին ձեռնարկել աջողությամբ Աղայան, Ահարոնյան, Լևո, գուցե Հովհաննես Հովհաննիսյան, Արեղյան։ Խորհուրդ պետք է այդտեղ՝ նախքան այդպիսի մի գործի ձեռնարկելը։ Շատ ավելի կնպաստե՞ր գրքույկի տարածմանը, եթե նա դարդարված լիներ պատկերներով...

Խրիմյան Հայրիկի մահը՝ կարելի է թե այդտեղ էլ սուսվում էր, բայց ամբողջ հայության համար շատ անակնկալ էր և անժամանակ, էլ չեմ ասում, որ նա անսահման վիշտ պատճառեց բոլորիս, իսկ ապագան մոթ է և անհայտ։ Ուր է թե աջողությամբ փարատվեր այդ խավարը և Հայրիկին հաջորդը արժանի դահակալ...*

* Նամակի մի պատասխիկը պակասում է (պատված է)։

1907, ապրիլի 28, <Մոսկվա>

Մեծաբզո պ. Ս. Հայկունի

Զ հատորի Ձեր ուղարկած թերթերը, համառոտ ու ընդարձակ խմբագրությունները, վերջին գրած Ձեր նամակները, նույնպես և Ալեքսանդրապոլ՝ եղբորս հասցեով ուղարկած նամակը ստացել եմ։ Հառաջաբանը այս անգամ՝ բացի Ձեր համառոտ կենսագրությունից բավական ընդարձակ կլինի։ Ձեռագիրը արդեն պատրաստ է, բայց այն տպարանը, ուր տպագրում ենք, սաստիկ զբաղված է և հաղիվ մայիսի 15-ին կարողանա ավարտել, թեև ես շատ աշխատում եմ, որ կարելույն չափ շուտով լինի։ Պատրաստ լինելուն պես իսկույն կուղարկեմ Ձեզ և այդ մասին կաշխատեմ անել ինչ որ հարկն է։ Իմ նպատակս է եղել հառաջ քաշել և շեշտել այս հատորի նյութերի նշանակությունը, ի մի ամփոփելով և Ձեր ցիր ու ցան ծանոթությունները։ Հաղորդում եմ Ձեզ իմ աչքովս ընկած տառասխալների ցանկը։

Դուք հարցնում եք, թե ի՞նչ պետք է տպագրենք Զ հատորից հետո։ Է հատորը հավանական է, որ այստեղ տպագրենք, նորա մեջ՝ բացի մի երկու գիտական հոդվածներից ազգագրության մասին՝ կմտնեն նյութեր՝ էմինի կենսագրությունը, նորա թղթակցությունը օտար լեզվով։ Ը հատորի համար կարելի է նյութ գտնել Ձեր աշխատություններից՝ նույնիսկ առանց սպասելու է հատորի լույս տեսնելուն։ Շատ հետաքրքրական են «Նյութեր հայոց սովորության իրավունքի», բայց պետք է առաջժամ դեռ սպասել դրանց հրատարակելու։ Կարելի էր մի հատոր կազմել Ձեր հետևյալ նյութերից.

1. Կենդանական վեպ (40 հատ, բարբառներով), 2. Առասպելներ (գրակ<ան> 2, բարբառ 6), 3. Գութան, 4. Կենցաղ և զբաղմունք (Տրապիզոնի հայ գյուղ), 5. Ընտանեկան բարք ու սովորույթ, 6. Խաղեր, 7. Հավատք, նախապաշարմունք..., (համեմատեցեք իմ «Ծրագիր հայ ազգագրության»):

Բայց իհարկե նախքան տպելը աչքի անցընել Ձեր ձեռագիրն, մաքուրի առնել, կարգի բերել ու դասավորել ինչպես հարկն է, որ թյուրիմացություններ չպատահեն։

Բայց ավելի կարևոր է ինձ Ձեր մի այլ աշխատությունը՝ Բառաբան հայ բարբառների, որը մի ժամանակ թեթևակի թերթել եմ։ Բայց դրան հրատարակելու համար՝ անհրաժեշտ է.

1. Լրացնել նրան՝ մտցնելով նրա մեջ բոլոր Ձեր մինչև այսօր լույս տեսած շուրս հատորներում պատահած դավառական բառերը.

2. Տեսակցել Հր. Անառյանին, ցույց տալ նրան բառարանը, խորհրդակցել նրա հետ և նրանից կարևոր հրահանգներ ստանալ բառարանի կազմության, բացատրության ձևի և այլ խնդիրների մասին։ Նա այդ հարցերին լավ տեղյակ է։ Մխիթար հ. սուրբին¹ մի անգամ էլ կգրեմ ինչպես դրել էի անցյալ տարի Մայր Աթոռի տպարանական վարչության։ Առաջժամ այսչափ։

Անկեղծ հաճախո՜ւմ

Ձերդ Գր. Խալաթյան

1907, նոյեմբերի 11, <Մոսկվա>

Մեծաբգո ա. Ս. Հայկունի,
բազմաշխատ ազգագիր

1) Այս օրերս ստացվել է վերջապես կազ<արյան> ճեմ<արանի> դի-
վանում Ձեր ուղարկած արկղը 200 օրինակ էմ<ինյան> ազգ<ազրական>
ժողո<վածուի> Զ-րդ հատորով: Այժմ ճեմ<արանի> վարչությունը հնա-
րավորություն ունի վճարումներ անել թե՛ տպարանին և թե՛ Ձեզ այն չափով,
ինչպես արդեն դրած էմ Ձեզ:

2) Ձեր ուղարկած նյութերը իր ժամանակին ստացել եմ և մանրամասն
ուսումնասիրել: Այժմ գալիս եմ իմ վերջնական կարծիքը հայտնելու ինչպես
գրել էի 31 մայիսի նամակում, այն է՝ ցավելով պետք է Ձեզ տեղեկացնեմ, որ
հազիվ թե այժմ հնար լինի տպագրել նրանց այն ձևով, ինչպես նրանք իմ
առջև են դրած. կարիք կա շատ փոփոխությունների և լրացումների, որոնք
երկար ժամանակ պետք է պահանջեն Ձեզանից: Այն բաժինները, որոնց վե-
րաբերում են Ձեր նյութերը (ընտ<անեկան> բարք ու սովորություն, կենցաղ
և զբաղմունք, հավատք) շատ ավելի բարդ են և դժվարին նկարագրողի համար,
քան օրինակ՝ հայ վեսերի, հեթաթեների և երգերի զրի առնելը՝ որոնք սակայն
մի գեղեցիկ շարք կազմեցին հայ ժող<ովրդական> գրականության:

3) Բառարանի վերաբերությամբ ես ստացա Աճառյանի նամակը: Նա հա-
ղորդում է իր ընդարձակ գավառական բառերի Բառարանը (այժմ 26000-ից
ավելի)¹ պատրաստելու մասին, որի մեջ կմտնեն և Ձեր հատորներում պատա-
հած ժող<ովրդական> խոսքերը, աշխատությունը կարող է ավարտվել մեկ
տարուց: Այս պատճառով ես անհրաժեշտ եմ համարում սպասել մինչև որ նա
ներկայացնե մեզ, եթե այդ դործը նպատակահարմար տեսնվի (և ես հույս
ունիմ) կտպագրենք էմի<նյան> ազգ<ազրական> ժողովածուի առաջի-
կա մի կամ երկու հատորներում: Ձեր բառարանը կմնա և դորանով Ձեզ զբաղ-
վելու այլևս հարկ չկա:

4) Այժմ ես զբաղված եմ Ձեր «Նյութեր հայ սովորության իրավունքի»²
ընդարձակ աշխատությունը աչքի անցընելով: Խմբագրությունը պետք է հանձ-
նեմ մասնագետ իրավաբանի: Եթե հետադաժում լրացուցիչ տեղեկությունների
հարկ լինի՝ կդիմեմ Ձեզ:

5) Ես ցավելով վերագարձնում եմ Ձեզ Ձեր բոլոր նյութերը (որպես և
ինքնակենսագրությունը), դուցե հարմարություն ունենաք մաս-մաս հրատա-
րակել «Արարատում» կամ փոքրիկ գրքույկներով:

6) Ձեր մասին ընդարձակ հոգված է գրել Արշակ Կարապետյանցը. երբ
որ լույս տեսնի, կժանոթանաք բովանդակությանը:

Մաղթելով Ձեզ առողջություն, հանգստության և երկար օրեր,

Մնամ անկեղծ հարգանք և ջերմ համակրությամբ՝

Չերդ Գր. Խալաթյան

Ծ Ա Ն Ո Թ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1

1. Հ. Բագրատ վարդապետ Վարդազարյանց—էջմիածնի միաբանության անգամ:

2. Ազգագրական հրատարակության հայտարարությունը՝ «Բարձրագույն հաստատված էմինյան ազգագրական դրամագլխի հրատարակությունների հանձնաժողովից» խորագրով, լույս է տեսել «Արարատ», էջմիածին, 1899, № 1, էջ 47—48:

2

1. Դր. Խալաթյան, Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887:

3

1. Մրցանակաբաշխությունը սահմանվել է՝ պետական աստիճանավոր հանգուցյալ Դանիել Գաբրիելի Քանանյանի կտակած միջոցների հաշվին՝ լազարյան ճեմարանի գիտական խորհրդի կողմից: Այն տրվում էր հայագիտական լավագույն գործերի հեղինակներին:

2. Ս. Հայկունի, Թագավոր Լուսիկ, Սետե հովիկ, Դերսիմի լեռներու մեջ հովվուհու կյանքը, Վաղարշապատ, տպ. ս. էջմիածին, 1900:

4

1. «Դավիթ և Մելիք» հեքիաթը տպագրված է «էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Դ, ժողովրդական հեքիաթ, հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա—Վաղարշապատ, 1902, էջ 369—398:

2. «Բալաբ աչառ» հեքիաթը տպագրված է «էմինյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում:

6

1. Տե՛ս «էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ե, Հայ-բրդական վեպ, հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա—Վաղարշապատ, 1904:

8

1. Տե՛ս «էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Դ, ժողովրդական հեքիաթ, հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա—Վաղարշապատ, 1902, էջ 360—398 և 401—462:

9

1. Նկատի ունի «էմինյան ազգագրական ժողովածուի» Ե հատորը, Մոսկվա—Վաղարշապատ, 1904:

11

1. Գարեգին Ենգիրարյան (1863—1920)—գրականագետ-քննադատ, բանասեր: Թղթակցել է «Լուսա», «Արձագանք», «Տարաղ» և այլ հանդեսների: Առանձին գրքով հրապարակել է «Մատենախոսություն», Թիֆլիս, 1909:

13

1. Ս. Հայկունի, Կենդանական վեպեր, ժողովրդական առակներ, Վաղարշապատ, տպ. ս. էջմիածին, 1907:

14

1. Մխիթար Տ. վ. — Էջմիածնի միաբանությունից անդամ, տպարանի տնօրեն:

15

1. Հ. Աճառյան, Գաղտնական բաների բանարան, Քիֆլիս, 1913:
2. Այս աշխատությունը չի հրատարակվել:

ПИСЬМА ГРИГОРА ХАЛАТЯНА САРКИСУ АЙКУНИ

В. Г. ВАРТАНЯН

(Р е з ю м е)

В письмах известного арменоведа Г. Халатяна (1858—1912) нашли отражение ряд вопросов, связанных с «Эминским этнографическим сборником». Будучи главным редактором этого сборника, Г. Халатян с целью его публикации развивает плодотворную деятельность, приглашая для сотрудничества знаменитых ученых (Г. Ачарян, Г. Тер-Мкртчян, Лео, К. Костанянц и др.).

Письма, адресованные известному фольклористу Саркису Айкуни (1838—1908), раскрывают некоторые данные в научно-филологической деятельности Г. Халатяна, содержат ценный материал по истории армянской этнографии. Письма хранятся в Музее литературы и искусства им. Е. Чаренца в фондах Г. Халатяна (V отдел, д. 97^а, 97^б, 97^г) и С. Айкуни (д. 133—136, 138, 139).